

Բանահիւսուծիւնը պատմութեան աղբիւր է ոչ միայն իւր բովանդակութեամբ, այլ և լեզուի կողմից. շատ անգամ բարբառներում պատահում են այնպիսի բառեր և դարձուածներ, որ խորին հնութեան հետքեր են բովանդակում իրենց մէջ: Մեր երկրի բնական և քաղաքական հանգամանքները բազմաթիւ բարբառներ են ստեղծել, որոնք, մի ընդհանուր ծագում ունենալով հանդերձ, ունին և այնպիսի առանձնութիւններ, որ ուսումնասիրութեան անհրաժեշտ նիւթ պիտի լինին: Այս բանն և Պատկանեան ցոյց են տուել բարբառների հնութիւնն ու անկասութիւնը գրաբարից և նոյն իսկ նոցա ազդեցութիւնը գրաբարի վերայ, բայց բարբառների իսկական արժէքը այն է, որ դոքա աղբիւր են նոր լեզուն հարստացնելու և կանոնաւորելու համար. բարբառների բազմազանութիւնը լեզուի ապագայ զարգացման գրաւականն է, իսկ գրական լեզուի զարգացումը ազգայնութեան մտաւոր և բարոյական յառաջադիմութեան խթանները: Օտար ազդեցութիւնների ստրուկ լեզուն, օտար դարձուածներով և բառերով այլանդակուած լեզուն անկարող է ծառայել իւր բարձր կոչմանը, — միութեան կապ և քաղաքակրթութեան արդիւնքների մատակարար դառնալ բազմաբարբառ ժողովրդի անդամների մէջ: Հայոց լեզուն կամայականութիւնից, խայտաբղէտ ազդեցութիւններից բարբառների լուրջ ուսումնասիրութեամբ կարելի է ազատել. հեղինակը կամ թարգմանիչը փոխանակ լեզուն օտարաբանութիւններով այլանդակելու, հայրենի բարբառից հանած կենդանի ոճերով ու բառերով կրճտխացնէ:

Ընդհանուր ազգային նշանակութիւն ունեցող բանաստեղծի հանդէս գալը կապուած է լեզուի մշակութեան գործի հետ. եթէ լեզուն անընդունակ է բարձր մտքեր ու նուրբ գաղափարներ արտայայտելու, աներևակայելի է և նշանաւոր բանաստեղծի գոյութիւնը, որովհետև աղքատ և անմշակ լեզուով չի կարող արդիւնաւորուել տաղանդը: Սորանով չենք ուզում հերքել, որ բաղաստեղծը իւր տաղանդով կարող է ծանապարհ հարթել, բայց և չենք կամենում մոռանալ այն հանգամանքը, թէ առանց աղբիւրի